

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳՈՒՂԻՐԷ, Ապրիլի փողոց
ՄՈՒԴԱԹՔՈՒՄԻ ճիշտ դիմաց
Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ
ՄԷԿ անգլա-համար տողը 3 ՂՂ. ողջ.
ՄԷԿ անգլա-համար տողը 3 ՂՂ. ողջ.
ՄԷԿ անգլա-համար տողը 3 ՂՂ. ողջ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
Տարեկան	ՂՂ. ողջ 100
Վեցամսեայ	» 55
Եռամսեայ	» 30
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆՈՒ ԶԱՄԱՆ	
Տարեկան	Փր. 26
Վեցամսեայ	» 14
ԵՏ ՁԻ ՏՐՈՒՄԻՐ	
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՆՈՒՄԻ	
ՈՒՂԷ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ	

ՓԱՐՈՍ

Լ. Ր. Ս. Գ. Ի. Ր.
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՐ. ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԵՐԵՔՇԱՐԹԻ, ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ
ՏՈՐԵՆԸ-ԽԱՐԱԳԻՐ Ք. ԱՆՓԻՄԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ, ՌՈՒՍԻԱ

Երբեք անգլիականացիները այնքան ընդհանուր չէր եղած որքան հիմա և ոչ մէկ երկրի մէջ այնքան բուռն կերպով արտայայտուած է որքան ի Գերմանիայ:

Այն անսահման ու խորին ատելութիւնը որ թաքուն վիճակի մէջ խմորուելու վրայ էր Եւրոպայի մէջ, Անգլիոյ դէմ, սկսաւ պոռթկալ Հարաւային-Ափրիկեան պատերազմին առթիւ, և թէպէտ Եւրոպական ոչ մէկ Պետութիւն աւելի կամ նուազ յիմարական գաղափարը ունեցաւ Բրիտանական առիւծին պոչին վրայ կոխելու, սակայն այն բուռն ու անզսպուած յարձակումները որոնց առարկան եղան Եւրոպական Մամուլին մէջ Անգլիական բանակը և նոյն իսկ ժողովուրդը, իրենց օգտակարութիւնն ունեցան անով որ անգամ մըն ալ ցոյց տուին Մեծ-Բրիտանիոյ թէ իր գործութեան անշափ զարգացումը իր մէջ սաղմերը կը պարունակէ իր գոյութեան իսկ սպառնացող լուրջ վրէտանդի մը:

Արդէն այս մտաւորութիւնը ժամանակէ ժամանակ խորհիլ տուած է Անգլիոյ հեռաւեռն պետական անձնաւորութեանց և ապահովարար անոր մէկ գործնական արտայայտութիւնը պէտք է տեսնել այն բարեշնչութեան մէջ որուն սկսած է ենթարկուիլ ժամանակէ մը ի վեր «հեշտաւեր մեկուսացումի» գերազանցապէս անգլիական քաղաքական հաւատոյ հանգանակը և որուն հետեւանքով պաշտօնական շրջանակին մէջ սկսան ընդունիլ նիդակակցութեան գրութեան անհրաժեշտութիւնը: Այս նոր շարժումին ոչ միշտ ամենէն աւելի ճարտար բայց ապահովապէս ամենէն խանդավառ պարագլուխն եղաւ Չեմպլըյէն, Գաղթային նախարարը և կը յիշուի որ ոչ մէկ ճիշդ խնայեց իրագործելու համար Անգլո-Ամերիկո-Գերմանո-Ճաբոնական հսկայ նիդակակցութիւն մը որով մտադիր էր անշուշտ, ամենէն առաջ, Սպիտակ Չարին տարապայման յաւանդութեանց վերջ մը դնելու: Այս նը պատակով էր որ ճամբորդեց Միացիալ-Նա հանգները: Բայց ի վաշխակցութիւն ընդունելով հանդերձ Չեմպլըյէնի հետ թէ Անգլո-Սաբոն ցեղին այդ երկու հատուածները միացնող Արիւնը աւելի զօրեղ է քան զանոնք իրարմբ բաժնող ուկէանը, աւելի խորապէս համոզուած էին թէ այդ երկու տարրերէն աւելի զօրեղ էր Շահը. և ասոր դրական

մէկ ապացոյցը կարելի էր տեսնել ոչ միայն Չինական տափնապիւն առթիւ Մեծ-Ճէյմսի ծրագրերնեւն նկատմամբ եղբայր Յոնաթանի ցոյց տուած գաղղ ընդունակութեանը մէջ, այլ մանաւանդ Միլիովկէանեան ջրանցքին վերաբերեալ Հէյ-Քոնսթօթ պայմանագրութեան վերաբնութեան առթիւ ծերակուտական ժողովին կողմէն Անգլիոյ նկատմամբ ցոյց տուած շնորհակալութեանը մէջ: Նմանապէս, Սալդալէրիի դահլիճը, իրեն պարտականութիւն մը ըրած էր, ամեն ատեն, ամեն առթիւ, հաճոյակատար ըլլալ Գերմանիոյ նկատմամբ անոր գործնական բարեացակամութիւնը շահելու համար միշտ ու մանաւանդ Ռուսիոյ դէմ, աւանդական ու յաւանդական թշնամին: Բայց նոյն Չինական տափնապիւն առթիւ կնքուած Անգլո-Գերմանական համաձայնութիւնը ուրիշ բանի չը ծառայեց բայց եթէ ցոյց տալու թէ Տետոնները տրամադիր չէին շագանակները միմեկին դուրս հանել Անգլիոյ հաշտոյն համար քանի որ Մանչեսթրի վերաբերեալ Ռուսո-Չինական պայմանագրութեան առաջին կնքումին առթիւ կոմս Պիւրլով կը յայտարարէր Մեծ-Ճէյմսի դահլիճին թէ այդ պարագան նախատեսուած չէր իրենց համաձայնութեան մէջ:

Ընդհանրապէս ամեն ինչ ցոյց կուտայ թէ անգլիականացի կերբերը հետզհետէ աւելի կը ծաւալին գերմանական խաւերուն մէջ և կը յիշուի անշուշտ այն զայրոյթի պայթումը որ Մամուլին կողմէն կատարել յարձակումներով ինչպէս և ժողովրդական միջիններով ի յայտ եկաւ Չեմպլըյէնի Լաթմպուրիի մէջ վերջերս արտասանած մէկ ճառին հետեւանքով ուր Անգլիոյ նախարարը պաշտպանելով բրիտանական բանակին արարքը անփազանց ախնարկութիւններ ըրած էր մանաւորապէս Գերմանական բանակին նկատմամբ, 1870ի պատերազմին առթիւ: Բայց ինչ որ աւելի կը ծանրացնէ կացութիւնը սա է որ այս երկու մեծ ու բարեկամ Պետութեանց պատասխանատու նախարարներն են որ հիմա բռնուած են իրարու հետ. և կոմս Պիւրլովի — որ Գերմանական «Ռայխսթային» մէջ մեղմօրէն զատապարտած էր, երեսփոխանի մը կողմէն Անգլիական բանակին դէմ ըրած նախատինքները ու մինչև իսկ առաջ գացած էր Չեմպլըյէնը պատասխանատու բռնել կիրքերու այս ցաւալի պայթումին համար — Մեծ-Բրիտանիոյ, գաղթային նախարարը իր բրիտանի հպարտութեանը մէջ վերաւորուած ուժգին ու ցամաքային շնչերով կու-

գայ պատասխանել նոր ճառով մը թէ ոչ ոքի դատերուն կը կարօտի և թէ ինքն պատասխանատու է իր վեհապետին ինչպէս և իր հայրենակիցներուն առջև միայն: Անշուշտ առաջին անգամ չէ որ Չեմպլըյէն իր թիչ զգուշաւոր ու համարձակ լեզուով պատրուակը կը հայթայթէ Եւրոպական ժողովուրդի մը աւելի կամ նուազ արդար բարկութիւնը իր և երկրին վրայ հրաւիրելու: Ոչ ոք աւելի հակակրելի է Ֆրանսայի մէջ որքան այս պաշտօնական անձնաւորութիւնը որ կարծես հաճոյք կ'զգայ կոյուական վերազգրդու անձնապատուութիւնը վերաւորելու ամեն անգամ որ առթիւ կը ներկայանայ հանրութեան առջև խօսելու հանրապետութեան հետ առկա ինչորի մը վրայ. և տալիս ինչ մոռցած, թերեւ, ի Բէթլեհեմի պէտք այն համարաւոր ճառը ուր Չեմպլըյէն Բորթ-Սթրիլի խնդրին առթիւ, կ'ըսէր թէ Չարին հետ համաձայնութիւն կնքելը ստանդարտ հետ երկարակոթ պայտով ապուր խմելուն եր նմանի...: Բայց անգլիական առաջնորդող շրջանակներուն մէջ իրաւամբ կը հարցնեն հիմա թէ Գերմանական այս զգայունութիւնը հանդէպ լատիզոյն չէ՞ արդեօք Ռուսիոյ՝ և հետեւաբար՝ Ֆրանսայի մերձեցումը համար: Ռուսի Անգլո-Ռուսական մերձեցումի մը զաղափարին նպատակը հոռու մը ուսած է ստեղծուիլ ժամանակէ մը ի վեր Անգլիական Հարաւային կարծիքին մէջ:

Նախ «Թայմ» սկսաւ հրատարակել շարք մը թղթակցութեանց ուր Անգլո-Ռուսական մերձեցումի մը խնդիրը կը յուշուի իր բոլոր տեսակետներով և ինչպէս սովոր է ընել Մամուլին իշխանը՝ ընդարձակ առաջնորդողի մը մէջ իր կարծիքը կ'արտայայտէր այս մասին և կ'երկարակցէր այդ գաղափարին իրականացման կարելիութեանը: Ուրիշ կարեւոր պարբերական հանդէսները կը մղեն հիմա պայքարը և այս առթիւ «Նաշնալ Րիվիւ» իր վերջին թիւերուն մէջ հրատարակած է երկու ուշաքաւ ու սուսնափրութիւններ, որոնց առաջինը հեղինակներէն է նաև կ'ըսուի նոյն ինքն Լորտ Լանստաուն:

Արդարեւ գաղթային Գերմանիոյ ծնունդը այնպիսի զրոտուր դէպք մըն է որ պարտի բարեփոխել Անգլիոյ և Ռուսիոյ արտաքին քաղաքականութեանց ուղեգիծը: Անվիճելի է հիմա թէ Գերմանիա երկու որոշ ու հաստատ նպատակներու կը ձգտի: 1. Դրովային գերակշռութիւնը: 2. Փոքր Ասիոյ նախատեսական և յետոյ քաղաքական գրաւումը: Ուրեմն, իրականօրէն, Անգլիոյ և Ռուսիոյ կենսական շահերն որ վտանգի մէջ

են տեսնեան այս անբաւ փառապիտեանց հետեւանքով: Բայց մինչև հիմա թէ ի Լոնտոն և թէ ի Բէթլեհեմի ուրիշ բան ըրած չեն բայց եթէ անգլիականացի նպատակը Հոնոնթոններու վեհապետին ծրագրերնեւն գործադրութեանը և՛ կարելի ըրած են այս վերջինին օգտուիլ իրենց միջև տիրող անիմաստ հակառակութեան իր ազդեցութիւնը հաստատելու համար թէ ի Փոքր Ասիա ի Ֆլաս Ռուսիոյ և թէ Եւրոպայի հոլմարի մէջ ի Ֆլաս Անգլիոյ: Հետեւաբար — կը հարցնեն Լոնտոնի առաջնորդող շրջանակներուն մէջ — ժամանակը եկած չէ՞ արդեօք Չարինու կայսրութեան հետ համաձայնութեան մը յանգիլ երկու պետութեանց հետեւի և ապագայ շահերուն փոխադարձ յարգանքի հիման վրայ և այս առթիւ «Նաշնալ Րիվիւ» կը թելադրէ հետեւեալ միջոցը: Թող տալ որ Ռուսերը հաստատուին հոն՝ ուր Անգլիացիները դիտարկութիւն չունեն իրենց տիրապետութիւնը տարածելու — ինչպէս Մանչեսթր, Մոնթրիալ, Պարսկաստան և Փոքր-Ասիա, Բրիտանական հովանաւորութեան տակ տանել թիպէտի լեռնազաւոր և Արաբական ցամաքակղզին — Գալով Պարսկային ծովը, — որ ամենէն մեծ խոչընդոտ է այս համաձայնութեան — յիշեալ հանդէսը նուազ անհաշտ է քան «Թայմ»ը և կընդունի «Փոքրայթի Րիվիւ»ի հետ թէ անհուն պէս վտանգաւոր չէ Չարին թող տալ որ նաւահանգիստ մը ունենայ հոն գոտ առեւտրական նպատակով:

Արդ պէտք է տեսնել Անգլիական կարծիքին կրած այս բարեշնչութեանը մէջ ճակատագրական անհրաժեշտութեանց իմաստուն համակերպութիւնը: Ամեն պարագայի մէջ ի Բէթլեհեմի ինչպէս ի Բարիդ «Ճոն Պուլին» մտերմական արամադրութիւնները ըզգլիւ խանդավառութեամբ մը չէ որ կը թուին ընդունուիլ և ֆրանսական հեղինակաւոր օրկան մը, «Ժուրնալ Տէ Տէպա», այս առթիւ դիտել կուտայ թէ մինչև հիմա բրիտանական զիւանադրութիւնն էր որ դէմ կը կանգնէր Ռուսիոյ՝ Ասիոյ և Ֆրանսայի՝ Ափրիկէի մէջ և թէ հետեւաբար պէտք է որ նախ Անգլիա զինաթափ ըլլայ թէ ըրբիտանական կառավարութիւնը ֆրանսական հանրապետութեան հետ տիրիկեան վեճերուն առթիւ բացարձակ արդարաւորութեան մը ապացոյցը տուած չէ միշտ, ենթադրութիւն մըն է որ ճշմարտութիւնը իր բաժինը ունենայ թերեւ: Բայց ինչու ըսել Մասկոֆեան հոկային համար որ յարմար այլ ապահով բայցերով հետզհետէ կը յառաջանայ դէպի Բէնճապի հովիտը և որուն կող-

Խ. Տ. Ե. Մ. Ի. Ր. Ճ. Ե. Ա. Ն.
ԱՅՍՍՆԱԳՈՅԹ
ԲԵՆՍԻԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕՐԵՆ ԵՒՓԼՐՏՍԻ ԴԻՄԱՑ

Եւրոպական գործընկերով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ահալայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ահալաներու, քանքիներու ոսկիէ, ալիւմինիումէ, ֆաուլտէ, Ապահով և տոկոն քլորալատ ոսկի, բլաթին, կայլն, կայլն, Լիւտերու հիւանդութեանց դարսանում Եւրոպական և ուրիշ միջոցներով:

մէն արշաւանքի մը ուրուականը ամեն ա-
տեն պաշարած է հեռաւոր Մեծ-Բրիտա-
նիոյ պիտական անձնաւորութիւններու ե-
րանակալութիւնը, յորմէ հետէ «Պրիմիւր իս-
թըրն ինտիմ զբոսանքի» տիրացած էր ա-
նոր ամբողջութեանը:

Ինչ որ ալ ըլլայ Անկո-Ռուսական մեր-
ձեցման մը գաղափարին ելքը ապագային
մէջ, բոլորովին անօգուտ չէր թերեւս ար-
ձանագրել իրողութիւնը իբր ժամանակաց
նշան մը, որովհետեւ ոտոյդ է թէ Ռուսիոյ
ու Մեծ-Բրիտանիոյ բաղադրական յարա-
բերութեանց նկարագրին հետ սերտօրէն
կապուած է Արեւելեան խնդրին լուծման բը-
նութիւնը:

Ա. Ճ.

ՈՒՐ ԱՐԵՏՈՒՄԵԱՆՆԵՐԸ

Ութ քաջեր են խրոխտ, հըզօր, գոտեպինդ,
Մոռցած էաւ՝, մոռցած տուն տեղ, մոռցած
խինդ,
Միայն վրէժ գոռալով գոռ լանջերէն,
Որ թշնամաց մահուան երգում ըրեր են:
Վազն իրեկոյ ձեր ըզլ պիտի արշաւեն,
Ժայռ՝, լեռն՝, եղէ՛ր անոնց ապաւեն:
Եղիւնե՛ք ձրեկեղէ՛ք ձեր հովանին
Անոնց ալյոսած ճակտին վրայ տրտմազին:
Գիշերն անքուն են, չեն կարող քնանալ.
Քաղցրագոյն ձայնը լրսեցուր, ո՛վ հաւիալ.
Տերեւներ մեղմահասան սօսաւին
Թող որոյ՛ աղուեսաբուն անոնց քուն:
Կապոյտ, թափէ ըզլ մութ լեղակոյ տաքերուն
Այդ առի՛ծուց, որ նշմարեն շատ հեռուն,
Արթուն, յոգնած, նօթի, ցոսկոտ, խրոխտ,
Վրսեմ,
Վրսեմ ինչպէս ասողերն երկնից մէջ նրսեմ:
Աստուծո՛ւ, ծածկէ գուցած շանթերդ գա-
հիդ տակ,

Կարգն ասոնց է, որ անպակտն անյապախ,
Որ տանջանքի, ար կըրակին, որ ոտորին
Ուշ բընալին չը զընելով նըկըրտին,
Իրենք կայծակ, ինչալ գլխուն ժանտերուն,
Ապագայի ջրնջի վատերն այն սողուն,
Անարգ վատերն որ, տաս մէկի դէմ վազեն
Եւ, սպառազէն, խեղդեն մարդիկն այն անգէն:

Այս, սիրական ընտանիքին թողուցին,
Լեռներն ինկան, գաշտերուն մէջ առանձին,
Գիշեր ցեղիկ իրար խառնած, վեհագի,
Առանց զլման, ահի, առանց արցունքի,
Եղբայրներու և քոյրերու սիրասուն
Հողիներուն մէջ գաշելով վայնասուն.
Ձագակորոյն առեւծներու պէս մըռտ,
Քաղցը սոսցած, քնախնդիր, զայրացկոտ:

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի(50)

ԺԸՀԱՆ ՏԻՎԻԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇԵՆՈՒԱԾ ՎԷՊ

ԳԼՈՒԽ ԺԱ.

—Մէկ անգամը «ընդմէջ ընկնելու»
լաւ է, կ'ըսէր անոյշ ծիմաղով մը:

Բայց պէտք էր որ մտածէր թէ իրեն,
Ժերմէնին, աս ըրածը շատ պատշաճ չէր,
և թէ հանրէր իրաւունք կ'ունենար գինը
պարտաւերու:

Բայց ան մին ըմբոստութեամբ մը կը
բողոքէր. «Ի՛նչ. պարտաւեր». միթէ ինքը
իր հայրենակիցը չէր, իր բարեկամուհիին

Քարերն ըրին զըլուինուն բորձ հազուադէպ,
Ապառաժին, ժայռերուն տակ ցից ու սեպ:
Արցունքի տեղ արին լեցուած աչաց մէջ,
Վատին արեան ծառան հոգուց մէջ անշէջ,
Պիտի սլանան, երէնեւու պէս արագ,
Փուշերու մէջ իրենց քայլեր կարմորակ,
Բոսորոված նայուածքին պիշ աստղերուն,
Պիտի երթան, ինչան կրակին մէջ, հեռուն:
Ե. Վ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՏԱՅԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ինչպէս մեր ընթերցողները կը յիշեն
ասկի գրեթէ երկու ամիս առաջ հրապարա-
կի վրայ երեցաւ Եղիպտոսի մէկ նորակերտ
բարտէսը, գործ Տիար Ռափայէ Նշանեանի:
Այս բարտէսը որ իր մատուցանելիք օգ-
տակարութեամբ յանձնարարելի գործ մըն
է, գտած է հասարակութեան կողմէ ահա-
զին ընդունելութիւն մը և պաշտօնական
շրջանակներու մէջ գնահատուած է իրեն
իր տեսակին մէջ մէկ հատիկ աշխատու-
թիւն մը:

Հեղինակը խիստ փաղաքուշ նամակներ
ստացած է կառավարական բարձր շրջանակ-
ներէն, ինչպէս նաեւ Ն. Բ. Խաթիւնի կող-
մէ, որոնց ամենուն մէջ գոհունակութիւն
յայտնուած է իրենց մատուցուած բարտէս-
ներուն համար:

Տիար Ռ. Նշանեան իր աշխատակիցու-
թիւնը Ն. Բ. Խաթիւնի ներկայացուցած ըլ-
լալով, հետեւեալ նամակը ստացած է Մեծ-
Արարողապետ Հասան Ասէմ փաշայի կողմէ:

ԽՏԻՎԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԻՔ
ԳԻՒԱՆ
ՍԵՄ ԱՐԱՐՈՂԱՊԵՏԻ
Թիւ 16 Ապրիլի Պալատ
4 Յունուար 1902

Տիար.

Ելք փութում ձեզ ծանուցանել թէ
Ն. Բ. Խաթիւն բարեհաճեցաւ ընդու-
նել ձեր ներկայացուցած Եղիպտոսի
բաղադրական բարտէսը:

Նորին Բարձրութիւնը հրամայած
ըլլալով ինծի զայն զետեղել իր անձ-
նական գրադարանին մէջ, պաշտօն
առաւ միեւնոյն ատեն իր շնորհակա-
լութիւնները ձեզ ներկայացնելու:

Հաճեցէ ընդունիլ, Տիար, խորին
աշխատանքաց հաւատարմութիւն:

Արարողապետ
Հ. ԱՍԷՄ

Երգուի Արթին փաշա՝ խորհրդական Հա-
սարակաց կրթութեան նախարարութեան,

եղբայրը... իրեն եղբորը պէս լան մը...
յանուն հասարակաց պանդխտութեան:

Միթէ գաւաթ մը գինին էր որ իր տե-
սութիւնը կը պղտորէր... Ինքը որ երկու
տարիէ ի վեր շուր միայն խմելու վարժու-
էր... Կամ մանաւանդ մէկ արդիւնքը չէր
այս՝ այն ակամայ հակակրթութեան զոր թար-
տիւն միշտ ներշնչած էր իրեն... Ժերմէն
չէր կրնար վերահասու ըլլալ այս երկոյթին.
բայց անտարակոյս, թարտիւն միեւնոյն կայ-
ուածքը չուէր: Ինչո՞ւ համար այդպէս ի-
րեն կը մօտենար, բոցակարմիր երեսը այն-
չափ մօտեցուցած իր դէմքին՝ որ անոր շու-
նին իր վրայէն անցնէր և գինը այրելը
կը զգար... Միեւնոյն, յիշեց քանի մը
պատմութիւններ որ իրեն պատմուած էին,
թարտիւնի նկատմամբ չափազանց հաճո-
յակատարութիւն ցոյց տուած գերուհիներ

հետեւեալ նամակը զրկած է Տիար Նշան-
եանի:

Սիրելի Տիար.

Շնորհակալ եմ ձեր զրկած Եղիպ-
տոսի բաղադրական բարտէսին հա-
մար:

Կառավարական պարոցներու մէջ
աշխարհագրութեան ուսուցման յատ-
կացնելու համար, զայն յանձնեցի ի
քննութիւն և յուսումնասիրութիւն նա-
խարարութեան մասնաւոր յանձնա-
ժողովին որ ամեն տարի զեկտեմբեր
15էն վերջը կուսումնասիրէ իրեն ներ-
կայացուած նոր աշխատասիրութիւն-
ները:

Եթէ այդ յանձնաժողովը իր հա-
ւանութիւնը տայ անոր գործածմանը,
պատրաստ եմ ձեզի կարեւոր ապու-
րանք մը տալ 1902-1903 դպրո-
ցական տարեշրջանին համար:

Հաճեցէ ընդունիլ ևն. ևն:

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ

Ն. Վ. Պոզոս փաշա Նուպար աւելի
գիտնականի աչքով կը ընէր բարտէսը և
իր գնահատումը կամփոփէ հետեւեալ նա-
մակին մէջ:

Տիար Ռ. Նշանեան

Գահիրէ

Լաւ մը աչքէ անցուցի երկաթու-
ղիներու բարտէսը որ ինձ զրկած
էր և հաճոյքով հաստատեցի թէ յա-
ջողած էր ասորեւր սանդուղիներ գոր-
ծածելով. թէ վարին և թէ վերին Ե-
ղիպտոսի բարտէսները ի մի ամփո-
փել սովորական ծաւալ մը ունեցող
միակ մէկ թերթի վրայ:

Ատիկ գտաւ այդ բարտէսը ամփոփ
կերպով կը պարունակէ Եղիպտական
և Սուտանի երկաթուղիներու կայա-
րաններու և անոնց թիւթմթրական
հեռաւորութիւններու վրայ խիստ պի-
տանի տեղեկութիւններ:

Այս տեսակետով մանաւանդ կը
նկատեմ զայն իրեն կարեւոր աշխա-
տակիւն մը որ անշուշտ հասարա-
կութեան կողմէ պիտի գնահատուի:

Ընդունեցէ, Տիար, լաւագոյն ըզ-
գացմանց հաւատարմութիւն:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Այս երեք նամակները միայն կապա-
ցուցանեն թէ հայազգի հեղինակը քաջա-
լերութեամբ է իր աշխատութեան մէջ և թէ
այդ բարտէսը կարեւոր պահան մը կը լեցնէ

որ խարաշանուած էին, ներքինի մը որ
վանտուած էր խաթալ արգիլուած այդ գոր-
ծին համաձայնած ըլլալուն համար, յետոյ
ճարտարապետին զիրքը վտանգի մէջ ինչա-
լը: Իր հիւսկատոսին աղաչանքներուն շնոր-
հիւ միայն կըրցաւ Մուրատի ներքին ար-
ժանանալ, որ շատ խիստ էր հարկմի վե-
րաբերեալ խնդիրներու մասին:

Կը խօսէին նաեւ զաւիլի մը վրայ զոր ու-
նեցած էր հանրմին ծառայութեանը մասն
Եւրոպացի անեկապանուհիէ մը, որ ճամ-
բու զրուելով՝ գիւղերուն մէջ կը մեծցնէր
զաւակը չափաւոր ամառնոյնով մը, զոր
զայթակրութեան ազատելու համար անոր
յատկացուցած էր:

Այս, այն բանը որուն Ժերմէն իր ան-
բըծութեամբ չէր ուզեր մինչև հիմայ հա-
ւատալ, ճշմարտութիւնն իսկ էր. այդ քա-

աշխարհագրական և բաղադրական տախ-
տակներու շարքին մէջ, ինչ որ շատ պատ-
ուարեւ պարագայ մը կը նկատենք Տիար
Նշանեանի համար:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ցաւ ի սիրտ կիմանանք թէ Գեր.
Յովսէփ Եղիպտոս Այվազեանի
հիւանդութիւնը երթալով սաստիկա-
նալու վրայ է, այնքան որ հարկ ե-
ղեր է առջի օր փառելիքի ներար.
կուսներ ընել Նորին Գերապատուու-
թեան ցաւերը ամբողջութեամբ համար:

Աւելարդ Առաջնորդը դարմանող
բժիշկներն են Տօքթ. Լըկրան, Ժամ-
կուհեան և Թէոֆիլ:

—Կարնոյ արկածելոց ի նպաստ
հանգանակութիւն մը ընելու նպա-
տակով կազմուած Թանձնաժողովին
12 անդամներէն միայն երեքը ներ-
կայ գտնուեցին և մինչև հիմայ գու-
մարուած երկու ժողովներուն:

Խեղճ կարնեցիները գեռ ժամանակ
ունին ցուրտէն սառելու մինչև որ
բան մը ըլլուի իրենց համար զերտ-
զանցապէս անտարբեր այս երկրին
մէջ:

—«Սրբահաղախ» ի մէջ կը կար-
դանք:

Կայս. Իրաւէ մը առիկ առաջ հրա-
մայած էր Աղ. որդանցի շինութեան յար-
մար գետին մը փնտռել Սիւտարի կողմե-
րը և թաղապետութեան կողմէ հարկ ե-
ղած քննութիւնները կատարուելով արդիւնքը
հաղորդուած էր Կայս Պալատ. Երեկուան
թուրք թերթերը կը գրեն թէ Կայս. Իրա-
ւէ մը հրամայած է այս անգամ որդան-
ցը շինել հանգուցեալ Սարգիս պէյի մահ-
ուամբ մահելու մնացած Գալֆաի Պաղը
կոչուած տեղոյն վրայ: Այս մասին ելած
Կայս. Իրաւէն տակաւին Գառական նա-
խարարութեան հաղորդուած չլլալով, զեռ
Պատրիարքարան տեղեկագրուած չէ: Յոյս
կայ որ յաւաքիկայ զարնան շինութեան
ձեռնարկուի և մինչև մէկ տարի ազգը ու-
նենայ իր սրբանոցը:

—Աղեքսանդրիոյ ծանօթ վաճա-
ռականներէն Մեծ. Գեորգէ Էֆ. Սար-
գիսեան, Ծնունդի այցելութիւններէն
զերծ մնալու համար 10 ֆրանք զըր-
կած է խմբագրութեանս, Ալիսայ որ-
բախնամ ընկերութեան յանձնելու
խնդրանքը:

զաքավար երկութիւն տակ, իր խիստ նայ-
ուածքին կամուրջ ցրտութեան տակ, Թար-
տիէօ իրաւ այն կնասէր մարդն էր զոր ի-
րեն նկարագրած էին:

Գուրաւ, ամենուն առջև զգեցած լընու-
թեան զիմակին տակէն՝ չէր կարծուէր ինչ
մարդ ըլլալ. այլ, հիմակուան պէս, աներ-
կեան առանձնութեան մը շնորհիւ է որ կը
դառնար կ'ըլլար վերստին բերաւ էակը, իր
զգայարաններուն գերի եղող նիւթական
մարդը, որ դանոնք գոհացնելու համար
կարող էր ոճիւր անդամ գործելու:

Աղջկանը մտքին մէջ յանկարծ յիմա-
րական վախ մը ծագելով, ոտք ելած էր,
ու զէպի գուռը կը գիմէր. բայց ան, ար-
դէն անիկ առաջ անցած էր, բաղադրութեան
կարկառած ճամբան արգիլելով:

—Մի՛ ելաք երթաք, Ժերմէն, սիրտ
մի՛ կտրեք... Ինձի նայեցէք, ես ձեզի
չարիք հասցնել չեմ ուզեր... գիտէ՛ք:

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍԲԻ

ՎԱՃԱՍՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՅՕՆՕԿՐԱՅՆԵՐՈՒ

ՔԱՆԱՔԱԿԱՆ ԱԺԵԱՐՅԷՆ

ՄԱՆՁՈՒՐԱԿԱՆ ՀԱՆՆԵՐԻՆ.— Ժամանակ է մը ի վեր Մանչուրիոյ ուսանական գրաւման վրայ ալ չէր գործեր և Չինական այդ ընդարձակ նահանգը ուսական հող մը նկատուիլ սկսած էր, և ահա այդ խնդիրը դարձեալ կը յուզուի: Բեքինէն Սրաւնաւսի բաշտած հեռագիր մը կը ծանուցանէ թէ հաշտութեան դաշնագրին Չինացի պատուիրակները հետեւեալ չորս առաւելութիւնները բրած են Մանչուրիական դաշնագրին գէմ: 1. — Չինական պատուիրակները չեն կրնար հաւանիլ Ռուսիոյ այն պահանջումին թէ Մանչուրիոյ մէջ գտնուած Չինական զօրքերը մարդերու գործը ուսանելի չեն անուանելէ զատ պիտի որոշեն Չինական պահապան զօրաց թիւը: 2. — Չինական պատուիրակները կը պահանջեն որ Ռուսիա Մանչուրիան պարպէ 3 տարուան ժամանակամիջոցի մը մէջ: 3. — Չինական կառավարութիւնը չի կրնար հաւանիլ որ Մանչուրիոյ մէջ գտնուած հանքերը ուսանական կառավարութեան արտօնութիւն միայն շահագործուին, և այդ կարգի գործառնութեանց մէջ միայն ուսանական գրաւմադուրը գործածուի: 4. — Վերջապէս Չինական պատուիրակները չեն հաւանիր որ ապագային երկաթուղոյ գիծերու շինութեան մասին սահմանափակ արտօնութիւն մը տրուի Մանչուրիոյ մէջ, մինչև որ Շանհայքուան-Նիւշուանի երկաթուղիի գիծը իր տեղերուն վերադարձուի: Չինական պատուիրակները այս պիտուութիւնները ընելէ ետքը կը յայտարարեն թէ իրենց պատրաստ են Մանչուրիական դաշնագրին միտ յօդուածներուն վրայ բանակցելու, և խնդրած են Բեքինի ուսանական դեսպանէն որ յիշեալ չորս առաւելութեանց պատասխանը փութով հաղորդուի իրենց:

ԲՈՐԹՈՒԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ԲՈՂՈՒՄԸ.— Մատրիտէն զեկտեմբեր 25 թուով կը գրեն: — «Լիզպոսայէն հասած լուրեր կը ծանուցանեն թէ Բորթուկայի անկախ թերթերը խտրել կը բողոքեն Լորէնցո Մարքէզի նուազանգոսին մասին Անգլիոյ հետ կնքուած համաձայնութեան դէմ: Լիզպոսայէն «Էմբարսիայ» լրագիրը կ'ըսէ թէ այդ համաձայնութեան հետեւեալ Լորէնցո Մարքէզի անկախական արձեւը, բողոքողին պիտի կոտորի Տիւրպանի, Բորթուկայի և Բիւրթուկայի մրցումներուն առջև: Նոյն

Մտեցաւ, ձեռքերը բացած, աչքերը փայլուն, շրթունքները կրքին բռնութեանց զօղողուն: Բայց անոր ալ աւելի սարսփա միայն պատճառեց. Ժերմէն ուղեց զանի մէկդի ընել, զարհուրեցած այդ տոփանքէն բոցափայլ զեմքին առջև որ զինքը կը զուհանգեցնէր:

— Զեքե՛ք, պոռաց ջանալով զանի ճամբէն մէկդի ընել. ձեքե՛ք զիս, պարոն, վատութիւն է այդ ըրածիդ... Կո՛ւր, հայրենակիցս... ընտանիքին բարեկամ...:

— Բայց ահա ճիշտ բարեկամիդ ըլլալուն համար է որ վախճալու բան մը չունիք: Օ՛հ ուրեմն, միայն պահեստ պիտի ձեզի, տղայութիւն մի՛ ընէք:

Իր տոփանքը զինքը կը յիմարեցնէր, ապուշի պէս եղած էր. մինչև անգամ անոր ըսելու եղաւ, «անպիտան աղջիկ»...

Թերթը կը յարէ թէ Բորթուկայի զերբէ հանգեալ Երոպայի ոչնչացած ու շատ նըսեմացած է, որովհետև կը տեսնուի թէ Բորթուկայ առանց ձայն ձայն հանելու չհաղանդի Պ. Չեմպրէնի հրամաններուն:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խախիւր երկէ առաւ ժամանոր ունեւորութիւն մը շնորհեց Ն. Ա. Բ. Օլտենպուրի զուգահեռ ինչպէս նաև Ն. Կ. Բ. Պօրիս Վլադիմիրովիչ մեծ դուքսին: Բառորդ ժամ ետքը Խախիւր Կէլերէ Բալաս գնաց փոխադարձ այցելութիւն մը տալու համար իշխաններուն:

Կէս օրէն յետոյ Պ. Քօկօրտան Ֆրանսական զինանագիտական գործակալաւորը, պատիւ ունեցաւ Նոյին Բարձրութեան ներկայացնելու Ֆրանսական «Շանզի» և «Լիւնուա» մարտանաւերու հրամանատարները Պ. Պ. Ֆրուա և Թարբուր:

— Խախիւր տարեկան պարահանգիստ տեղի պիտի ունենայ յառաջիկայ շաբաթ գիշեր 25 Յունիսը Ապոնի պալատին մէջ: Հազար հրաւիրագիր պիտի ցուին այդ պարահանգիստին համար որուն շքանշանի խնամքը յանձնուած է Պ. Ժօրժ Նունկուիչի:

— Երկրագործական ցուցահանգիստի բացման հանգիստ տեղի պիտի ունենայ Յունիսը 22ին ընդ նախագահութեամբ Ն. Բ. Խախիւրի:

— Պատրիսիան փաշայի որդին Օսման փաշա և ընտանիքը, ինչպէս նաև երեք ուրիշ «ժեօն թիւրք»ներ, շնորհաբար օր «Գահրա» շոգնաւով Պոլսի մեկնեցան, Սուլթանին կողմէ ներման արժանացած ըլլալուն հետեւեալ:

— Խախիւրի շոգնաւային ընկերութեան Ալեքսանդրիոյ գործակալ Պ. Հոմսի իր պաշտօնէն հրաժարած ըլլալով, անօրէն կարգուեցաւ Խախիւրի անձնական շոգնաւոր:

— Խախիւրի բարեգործական ընկերութեան կողմէ կազմակերպուած զբոսի վիճակահանութիւնը որ ամսոյս 14ին պիտի բաշտուի, յետագայում է յառաջիկայ Մարտ 22ին:

— Թէև զօրոյց մը կար թէ Հասան փաշա Ասէմ հրաժարած է Մեծ-Արարողագիտի պաշտօնէն, սակայն Մարքէզի մոլորութիւն կը հերքէ այս լուրը:

— «Ֆարա տ'Ալեքսանդրի» մէջ կը կարգանք թէ Գահրիէ հայ բարեկամական ընկերութիւնները մտադիր են թատերական

ինչ կ'ըլլայ եղեր, համարը մը... շիտակը ատոր համար կը վայլէր այդպիսի աղմուկ հանել...:

Սակայն ան, ետ ետ կը բաշտուի, ջանալով միշտ զուարէն հասնել. այդ մարդուն կողմէ այսպիսի բռնաբարութիւն մը պարկեշտութեան և մատահոյսեան իր բոլոր գաղաբները կը յեղաշրջուի... ուրեմն իր նախադրացումները զինքը խաբած չէին... իրաւ անի այն թշնամի՛ն էր զոր իր հակակրօնները իրեն գուշակել տուած էր:

Երկուքին մէջ տեղի ունեցած անմոռնչ պայքարը կը վախճուէր որ պիտի երկարէր. Ժերմէն իրեն անպատուութիւն համարելով մարդ կանչել, գաղթակցութիւն մը հանել որ կրնար գուցէ իր անստգիւտ պատուին արատ բերել, իր սեփական ոյժերուն և իր կամքին շնորհիւ միայն կուզէր ազատիլ:

Երկուքի մը տալ փետրուար 9ին, Խախիւր կան Օրհնային մէջ:

— Երկէ զիշեր Պ. Քօյախիւր մեծ հաց-կերպի մը առաւ որուն ներկայ դանուեցան Օլտենպուրի զուգահեռ և զբոսահին, Պօրիս մեծ դուքսը, Տէմիտօֆ իշխանը, արժեք ասպետը և ուրիշ բարձրաստիճան անձնաւորութիւններ:

— Խախիւրի թանգարանը ի մօտոյ պիտի տեղափոխուի Մանսուր փաշայի հրապարակին վրայ յատկապէս կառուցուած նոր շէնքին մէջ:

Նոր թանգարանը կահաւորուելու համար, Հանքային կրթութեան նախարարութիւնը 22.000 ոսկիի վարկ մը խնդրած է:

— Հեղինակաւոր կառավարութիւնը Եգիպտոսէն գացող շոգնաւորներու դէմ հաստատած 10 օրուան քարանձիւնային վերցուցած ըլլալով, յառաջիկայ շնորհաբար օրէն սկսեալ Խախիւրի ընկերութեան շոգնաւորները պիտի վերսկսին Բիւրէ հանգիստը ըստ նախնային:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲՐԷԹՈՐԻԱ, 15 Յուն.— Զօրավար Էլլերի երկարատե հաւածանքը վերջապէս ցրուեց Տրիթի հաւաքած մեծ ուժերը: Ասոնք Հայկական հարաւակողմը զանազան ընդհանրութիւններով մտնող խումբերու բաժնուեցան: Պոլսից 20 հոգի և մի քանի բռնակալներ կորուսին:

ԼՈՆՏՈՆ, 15 Յուն.— «Կալէթ»ը կը հրատարակէ շատ մ'ազդեցիկ անձնաւորութեանց կողմէն թագաւորին ուղղուած ազդեցիկ մը՝ որով կը խնդրեն Բրիտանական Ալազեմիայի մը հաստատումը որ ըզբաղի պատմական, փիլիսոփայական և բանասիրական խնդիրներով:

ԼՈՆՏՈՆ, 15 Յուն.— Պ. Ա. Էթթ, Հանէյի մէջ խօսելով, ըսաւ որ ազատական կասկեցութեան միտքները այն ժամանակ միայն կարելի պիտի ըլլար երբ իբր հիմ ընդունուի Լոյս Ռոզպերի Զեմբեր-Ֆիլա արտասանած բանախօսութիւնը իւր ամբողջութեամբ:

ՊԷՐՍԻԱ, 15 Յուն.— Իշխան Հանրի Փետրուար 15ին Նիւ-Եորք կը մեկնի:

ԲԱՐԻՉ, 15 Յուն.— Շատ մը Յիսուսական կրօնաւորներ և ի մէջի այլոց Հայր Տիւ Լազ, զատի պիտի ենթարկուին կրօնական միաբանութեանց վրայ զրուած օրէնքներուն դէմ շարժած ըլլալուն համար:

Վերջապէս ձեռք անցուց զանի, մօտ էր գրկապնդելու, ու երբ կը ծնէր համբուրելու համար անոր պարանոցը որ գերազայն ընդլիմամբ մը բուռն կերպով դէպի ետ քաշուած՝ կը պրկուէր, երկու ձեռքերով՝ այնպիսի թափով մը որուն ուժգնութիւնը գայլաբայէն կը կրկնապատուէր, յաշտեցաւ ինքզինքը ազատել, այնչափ ուժգին հրեց զանի որ ոտքը սահեցաւ և ճակատը բռնապիսի անկիւնին բախեցաւ:

Վերաւորուած ըլլալու էր, վառնդի չկրցաւ ձեռք մը զսպել: Ինքը, յաղթանակէն օգուտ քաղելով աճապարանք կը փախչէր, շնչասպառ կը վազէր սենեակը փակուելու:

Մինչդեռ ինքը կ'իբրթար, ան ոտք ելաւ, ուղեց նորէն հալածել զանի և հեռուէն կը լսէր մէջէ մէջ սենեակներուն մէջէն՝ կերպասներուն թանձրութեանը մէջ խեղդուած անոր ձայնը որ կ'ընէր:

ԼՈՆՏՈՆ, 16 Յուն.— Խորհրդարանի քաջութիւնը. — Գլխաւոր:

Նորին Վեհափառութիւնը ըսաւ թէ Կալէթի իշխանը և իշխանուհին իրենց վերջին ծամբարութեան մէջ շնորհ ընդունելութիւն մը գտած են ամեն ուրեք: Ինքը համազուած է թէ օրհոյն ներկայութիւնը օգտակարապէս ծառայած է փոխադարձ համարուած և հաւատարմութեան կապերը ամրապնդելու, ինչ որ կեդրոնաւոր Բրիտանական կայսրութեան զօրութիւնը: Օտար պետութեանց հետ յարաբերութիւնները բարեկամական կը մնան:

Պատերազմական շրջանակը ուր ճակատամարտներ տեղի կ'ունենան, նուազ ընդարձակ է քան առաջ և ճարտարաւեստները երթալով կը յառաջիմեն նոր գաղթականութեանց մէջ:

Հարաւային Աֆրիկէյի մէջ տեղի ունեցած պատերազմին մէջ, մեր զինուորները աշխույժ, համբերատարութեան և մարդասիրութեան ապացոյցներ տուին:

Այս մասին մեծ գովեստի արժանի են անոնք: Պատերազմի յօգնութեան ամենէն շատ տառապող զօրագնացներու տեղ ուրիշ նոր ոյժեր զրկելու պէտքը առիթ ընծայեց մեր գաղթականութեանց իրենց հայրենասիրութեան և հաւատարմութեան և բախտը մեզ մատուցանելու: Նոր զօրաբաժիններ ի մօտոյ պիտի հասնին ի Հարաւային Աֆրիկէ Բանատայէն, Աւստրալիայէն և Նոր Զելանտայէն:

Նորին Վեհափառութիւնը կը յուսայ որ շաբաթի խնդիրն ալ նպաստաւոր կերպով պիտի կարգադրուի առանց փառ հաջողութեան արտադրել գաղթականութեանց և երկրին գործարանատէրերուն:

Խորհրդարանի ներկայ տարեշրջանին մէջ օրէնք մը պիտի ծրագրուի որով զիբարթաններ պիտի ընծայուին իրաւատիւ մէջ հող ձեռքի կամ առնել ուղղութեամբ:

ԵԳԻՊ. ԲՐԷՏԻ ՖՈՆՏԻԷ
1902 ՅԱՆՎ. 15ի ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ
311,223 թիւ կը շահի 100,000 ֆրանք
Հետեւեալ 25 թիւերը հազարական ֆրանք կը շահին

5,904	65,801	154,616	242,900
8,199	80,397	156,755	267,763
31,846	82,272	157,361	277,071
41,203	94,156	188,362	294,145
47,580	101,879	194,845	303,699
55,850	147,316	231,038	315,487
		324,	117

— Հոգ չէ՛, որ չեմ պահէր ձեզի դէմ... Բայց գուցէ ալ այդ խնդիրն վրայ չէք մնար... Ժերմէն կը մտածէր թէ աղէկ չէր ընել իր իրաւ հանքերին ամեն բան իմացնելու, և թէ Մուրատի մօրը պաշտպանութիւնը իրեն հարկաւոր չպիտի ըլլար իրեն և այդ մարդուն անորակի ժամանակները մէջտեղ անանցանելի պատուար մը կանգնելու համար: Յետոյ, երբ հաշուն կերպով խորհրդածել ոկաւ, երբ ոստիկի բարկութիւնը իշաւ, մտածեց որ ինքն իսկ կարող էր ինքզինքը պաշտպանել: Անօգուտ էր Զօհրան խառնել այս ամօթալի գաղտնիքին մէջ. ո՞վ պիտի թէ հանքը, երբ այս անի մանալի զէպը անոր պատմէր, մտքն չը պիտի անցնէր թէ, որպէսզի այդ մարդը այս բանը ընելու համարձակէր, պէտք էր որ աղջկանը վարմանը առաջուց անոր տեղի տուած ըլլար: Կրնար ըլլալ որ պաշտպանութեան կողմէն շահած համարումի կործանել կորսնցունէր:

Շարունակելի) Թարգմ. Յ. ՄԵՐԵՔԵՆ

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱՅՈՒՄԱՆ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊԹԻՑԷԻ ՇԷՆՔԻՆ ԴԷՄ

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՅԱԼ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱԶԱՐ ՁՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գործադրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՑԻ սակագները և ապահովագրութեան վանադան դրուբիւնները չափաւորապէս մի՛ ապահովագրուիք. — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼԻՅԵՐ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղբքանդորիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալաւոր Գ. ԵԿԱՌՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԴԼՈՒԹ 200,000,000 ՁՐԱՆԲ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ Յ ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՒ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ֆրանսայի և Եւրոպայի երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եղիպտոսի և արտա-սահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւորով մուծակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթը օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիրէա, Իզմիր, Միսիլի և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբքանդորիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգեխաները Բիրէա հանդիպելուն, Աղբքանդորիա:

Բէա հանդիպելուն, Աղբքանդորիա:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոս-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մերսին և Իսկէնդրիոն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբքանդորիա ամեն շաբաթը օր, առաւօտեան ժամը 6ին:

Տարեկան օրը անգամ մը՝ երթեկ կարմիր

Ծովու հետեւեալ նաւահանգիստներու միջև:

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՍԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանքահանար դիմել Ընկերութեան Աղբքանդորիոյ, Բոս-Սայիտի, Սիէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Բուրի ամեն մամնաճիւղերուն:

1--1902

ՅԱՆՁՆԱԿԱՆ-ԴՈՐԾԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԱԿԱՆԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և շրջականերէն կ'ընդունուին Պոլիս, Վիեննայի և արտասահմանի ուրիշ կեդրոններ վանաւած ամեն տեսակ գրքերու, ինչպէս նաև Համպուրի, Պրոնշուիկի վիճակահանութեանց տոմարներու, եղիպտական Գրէտի ֆոն-սիէի, Բուժէլի երկաթուղոյ բրոմէաներու, և դարձեալ ամսավճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ տալիք քննարկները ըլլալու են կանխիկ փութի միջոցաւ: Գրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և ֆինանսաւոր «գնեթո ռամպուրման» վճարել այն պահուն, երբ յանձնարարութեանցը զրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 զըշ. արժէթով յանձնարարութիւններու համար եղիպտ. 5. միլիոնոց դրոշմաթուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մարտի կային ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի:

Հասցէ՝

Garabed Erzenatzian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԷՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինոց, արանց, կանանց և աղայոց հագար:

Չափի վրայ զգեստներ, յաւազոյն պայմաններով:

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹԼԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԵՋ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻԶՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍԵԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգեխաներով

ԱՆՈՐԴԷՕՐ ՆԻՔՈԼՍ. Թու. 5500	21.10.20 ժամը տարողութիւն թու. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ	" " 5500 2ԱՐ " " 5500

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԱՆԳԱՄ ՄԸ Կանոնաւոր մեկնում՝ Աղբքանդորիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԶՐԻՄ ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգեխաներուն հետ որ ուղղակի կ'երթան ՄԷՎԼԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ԾՈՂՈՒ ՍՈՒՄԱՆ ԵԶԵՐԲԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԻՐԻՄ և ԱԶՈՅԻ ԾՈՎ:

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղբքանդորիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱԲԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ՔԻՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղբքանդորիա, Իզմիր, Եւրոպայի քաղաքներ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խորվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագլուխ Անդլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլիին Բալմեր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մամնաճիւղեր. Աղբքանդորիա, Մանսուրա, Եաբութ:

Եղիպտական Աղբքանդորիայի Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ աղբքանդորի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՓՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է առնալէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղբքանդորի մէջմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աղբքանդորի դերու նման չի խանդարեր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

43—316